


ԲԱԺՆԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսայ 0.85
ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ժրանք
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Պարագրու թեան զրկուած
նամակ կամ ծրար եւ
չեն վերադարձուիր
ԳԻՆ 3 ՍԷՆԹ




Պ Ա Յ Ն

Հայրենեաց

ՇԱՐԱԲ-ՍՈՒՆԵՐՈ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



ՄԶԱԻՆ
ՊԱՐՆՈՒՄԻ
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՏԻ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
Worcester, as Second - Class
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԿՐՕԿԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Այս նիւթին վրայ շարք մը յօդուածներ գրեցինք և կարծէ ընդ երկար գրել տակաւին. որովհետեւ մարդկային կենաց որպիսութիւնը խիստ կենսական կապ ունի կրօնի հետ և կրօնանք թերեւս ինքզինքնի պահել անոր հանդէպ անգիտակ. սակայն ատով չենք ազատիր անոր մեր վրայ ի գործ դնած բարի կամ յոռի. շինել կամ աւերել, օրհնաբեր կամ անիծարբեր ազդեցութիւնն:

Բնութեան ազդեցութիւններուն վերայ մեր անգիտակ ըլլալը, ճիշդ կամ անճիշտ գաղափար ունենալը երբէք չեն փոխեր անոր էութիւնը և ներգործութիւնը: Կայծալին վրայ ինչ գաղափար որ կուենան ունեցիր, երբ անոր նետ դէմ դէմի կելլէք, քու իր վրայ ունեցած կարծիքը քեզմէ չի կարգուներ երբէք, ոչ ալ իր գործութիւնը չը ճանչնալը, ուրանալը կը փոխէ ինչորք. կայծալիտէսար եւ:

Ասանկ մը ի վեր է որ Հայոցս մէջ չարութեւ մը սկսած է. կրօնը մոռնալու և մոռցնելու տալու ձգտում մը. կը կարծուեն մտակայն. մեր կրօնը մոռնալով ու մոռցուել տալով՝ կարգաւորէք անոր մեր շուրջը ամէն կողմ տարածած ազդեցութիւնէն, միթէ աչքերդ գոցելով կրնաս ծածկուիլ այն աչքերէն որ քու վրայ կը նային արդէն: Արեւին ճառագայթները օր մը իրենց վրայ կ'արդոց ունեցած գաղափարները կարգուցեր' ու ըստ այնմ իրենց գոյութիւնը կաստատանք կամ անկէ հրաժարեր' են:

Ո՛չ ապաքէն այն ազդեցութիւնները որ կան, կան անոնցմէ յառաջ եկած արդիւնքն է որ կը գնանազանուի ընդունակութեանց աստիճանին և եղանակին կամ մաստաւութեանը. ու մարդկային գիտակցութեան զանաւորով՝ կը տեսնենք թէ մարդիկ զրկենք շրջապատող ազդեցութիւններէն կ'օգտուին կամ կը վնասուին իրենց կազմած ճիշտ կամ անճիշտ, առաւել կամ նուազ գաղափարներուն կամ մեծատ, մարդկային յառաջդիմութիւնը կը մղուի ազդեցութիւններու և անոնց կիրառութեանը վրայով ստացուած ծանօթութիւններովը. սխալ եւ անճիշտ, մղար ծանօթութիւնները կը ծնանին չարիքը. և ազդեցութիւնը կը գրկէ գմարդ այն բոլոր բարիքներէն զորս գիտութիւնը կը պարզեւէ ուրիշներուն, նայեցէք այն երկիրներուն որոնք ազգէտ են շոգիլին և ելեքտրականութեան հնարաւորութեանցը և հնարքներուն. և աչքերնիդ դարձուցէք հակառակ կողմը. տեսէք տարբերութիւնը որ յառաջ եկած է ազդեցութիւններու մասին ստացուած տարբեր աստիճանի եւ եղանակի ծանօթութեանց տարբեր ու հակառակ արդիւնքները:

Թէ կրօնը մարդկութեան հետ ծնած ընդածին և ինքնուրոյն ազդեցութիւն

մի է. ոչ սք կրնայ ուրանալ, չկայ ազգ մը, եղած չէ ժամանակ մը որ կրօնի ազդեցութիւնէն զերծ անցնի: Հնախուզութիւնը մեզ որքան ետ որ կրնայ տանիլ՝ մարդկային պատմութեան խանձարուրին՝ մինչեւ 8000 տարինը առաջ. հոն ալ կը տեսնենք որ մարդիկ իրենց գերեզմաններուն մէջ պառկած են կրօնական հաւատքը և անմահութեան յոյսը գրկած: Կրօնը կենաց ու մահու զուգման ծնունդն է. կենցաղը և գերեզմանի ընդ գրկուածովն կը կազմուի այն կամուրջը՝ որով ծանօթէն դէպի անձնօթը կանցնինք. և այդ անձնօթը չէ՞ որ ճանաչանալու պարաններով, հոգեգմայլ բուրմունքու ձգողութեամբ, սիրոյ աչքերու նազելովստ ակնարկներով կը քաշէ մեզ կը տանի, կը բարձրացունէ հոգեկէն բարձրութիւններու ճամբարութիւնով մը. մարտիրոսութեան, զիցցազ նութեան, ազնուութեան, առաքինութեան, արդարասիրութեան, ճշմարտասիրութեան վերելքներով դէպի մեծանց նութիւն, և դէպի անմահութեան մայրակաթու ու բազկատարած գիրկը. դէպի հանդերձալը:

Մեր նախորդ յօդուածով (թիւ 40) քսած էինք թէ բնութեան երրորդութիւնը կը կազմեն ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆ, ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ և ԱՐԴԻՆԻՒԹ. և համառոտակի ջանացեր էինք պարզել անոնց յարաբերութիւնները:

Ազդեցութիւններ կան որ իրենց երևոյթին մէջ խիստ աննշտ. աննկատելի և նոյն իսկ ոչ ինչ են. մինչ անոնց յառաջ բերած արդիւնքը ահա որ կը ըլլայ:

Անշուր կը գտնուի լայնութեան այն աստիճանին վրայ՝ ուր գտնուող ուրիշ երկիրները տարին տան ու երկու ամիս սառնամանիքով ծածկուան են. ինչ բան ուրեմն՝ ինչ ազդեցութիւն կուզայ եւ հակառակ բնութեան հաստատեալ օրինաց՝ սառուցեալ գօտիին այդ մասը կը վերածէ բարևառն գօտիի:

Ո՛վ կրնայ հաւատալ. որո՞ւ մտքէն կրնայ անցնիլ թէ արևմտեան կիսագունդէն Մեքսիքոյի ծովածոցէն տաք ջուրի հոսանք մը ելլէ այդ հոսանքը ցամաքէն ընթացող գետի պէս Ատլանտեան ովկիանոսին մէջէն սահի, երթալ հազարաւոր մղոններ, հասնի Եոզէտ-Նորվէկիայի սահմանները, քերէ անոր եզերքները. դառնայ անկէ դէպի Անգլիա, բոլորի անոր շուրջը. և այդ ամբողջ ժամանակին ու ճամբորդութեան միջոցին իր մէջ տակաւին պահէ այնքան տաքութիւն որով փոխէ ինչպէս Անգլիայի նոյնպէս և Եոզէտ-Նորվէկիայի կլիման, որով հոն ուր սառի և ձիւնի յաւիտենական և անդնդախոր սառանը ձգուած պէտք էր մնար, ներկայ յուրիս դաշտերը տարածուին. ծաղկազարդ բուրստաններ, պողպալից պարտէզներ, ա-

մէն կերպ բերքերով լի արտոյայք, կանաչ մարգագետիններ ու սաղարթազեղ անտառներ, քաղաքակրթութեան կենսատու այս ոտանը կը կազմեն: Եթէ այս կատարուած իրողութիւնը առնեն ինչ չունենայինք, ինչ տրամաբանութիւնով, ո՞ր միտք կարող կըլար խորհիլ, ըմբռնել եւ հաւատալ թէ Մեքսիքոյի այդ հեռուոր եզերքէն ովկիանոսի պողտարածութեան ծոցէն ըլլած տաք ջուրի հոսանք մը երթալով յառաջ պիտի բերէր յիշեալ արդիւնքը. սակայն իրականութիւնը մեզ հաւատքէն ալ անդին կը տանի. ոչ միայն կը հաւատաք այլ գիտենք:

Նոյն պէս է նաև կրօնի ազդեցութիւնը. անոր երևոյթական ներգործութիւնը առաջադրուած արդիւնքներուն հետ բախտատելով ոչ ինչ կը յուսանք. նիկողիմոսներու Լէգէոններ անհաւատութեամբ կը հարցունեն, «Ատիկայ յնտո՞ր կրնայ ըլլալ. ինչպէս կարելի է...» սակայն կրօնի ընդհանրական պատմութիւնը և անհասակուն փորձառութիւնները՝ անոր աննշմարելի և աննկատելի ազդեցութիւնն արտադրուած կը բուռնալի իրականութիւնները կը պարզեն մեր առջև որոնք կը տեսնենք, կը հաւատանք, կը վստայենք:

Դարերու ընթացքին մէջ իրարու ետեւ խախտուած ազգեր, ժողովուրդներ և անհատներ իրենց ընդունակութեան շափին ու եղանակին համեմատ, «արհամարհուած» կրօնի, արհամարուած ազդեցութիւնով ինչ փոփոխութիւններ կրած և ինչ ահաւոր արդիւնքներ յառաջ բերած են. ինչպէս անբարոյական սառնամանիքներու տեղ՝ բարոյական ջերմ ու կենսաւէտ միջավայր ի հանդէս եկած է, այդ անձնօթ եզերքներէ ըլլած հոգեկան հոսանքը մեռելախառն մարդկութեան շուրջը դառնալով՝ ինչ վերքատին ծնունդի և նոր կենսի ընդունակութիւն ծագեցուցած է, այդ, ըստ երևոյթին՝ ամէն առարկութեանց և արհամարհանքի նշաւակ հոգեւոր Մեքսիքեան հոսանքը մեր անհատական ու ազգային կենսի մէջ ինչ սխալի ազդեցութիւններ գործելու և ինչ փառաւոր արդիւնքներ յառաջ բերելու գօրութիւնը ունի. ինչպէս այդ տնհաւատալիէն հաւատարին կիրականայ. այս մասին կը խօսինք յաջորդիւ:

ԻՆՍՏՐՈՒՄԻ ԱՐԿԱՍՏ ՄԸ
Անցեալ հինգշաբթի առաւօտ Ուստրի մէջ խիստ աղիողորմ արկած մը պատահեցաւ յանձին տիկին Մարթա Մարութէ նահիկանի:
Տիկինը ամանի մը մէջ քարիւղ լեցունելու պահուն իւղը ամանէն դուրս թափելով յանկարծ կրակ կառնէ եւ կը բռնկի: Բոցը մարելու նպատակաւ մեթորես մը կը բերէ և վրան կը ձգէ, որովհետեւ մեթորեսը (տօշէկ) խոտ կը պա-

րունակէր, այն ալ կը բռնկի, տիկինը այդ աւելի սոսկալի բռնկուածէն ինքզինքը կորսնցուցած մարելու ջանքեր կընէ. և ահա իր հանդերձներն ալ կրակ կառնեն և կոկոր վառիլ. իր ինն տարեկան աղջիկը իրեն օգնութեան կը հասնի, և բոցերը մարելու համար գործած դիւցազնական ջանքերուն մէջ արի աղջկան ձեռքերն ալ կը խաշին կը խորսվին. դուրսը կը վազէ, «օգնութիւն» կարգազակէ, մինչեւ օգնութեան կը հասնին եւ արկնող հանդերձներուն բոցերը կը մարեն, արդէն խեղճը ոտքէն մինչև գըլուխը եփած էր...:

Անմիջապէս հիւանդանոց կը փոխադրեն տիկինը ուր նոյն օրը հոգին կաւանդէ:
Արդ կուզանք մեր սրտին խորին ցաւակցութիւնը յայտնելու մեր յարգելի բարեկամին Պ. Մարութէ նահիկանի պատահած այս ահաւոր դժբաղդութեանը համար. որով կորոյս իրաւունքէ առաքինի ամուսին մը: Յերկուստ միթաթութիւն կը հայցենք իրեն և իր 6 տիկնի ցաւակազ որոնք որք մնացին՝ կորուսանով անմահ մայր մը:

Այս առթիւ հարկ կը համարինք ըսելու թէ, երբ քաղաքը բռնկի, զայն մարելու ամենայնով միջոցն է թանձր լաթ մը կամ անկողին մը ձգել բոցերուն վրայ, շատ աւելի արդիւնքը լայն եթէ ձգուելու բանը թրջուի. ու երբ մէկին հանդերձները բռնկած են, նոյնպէս զայն փաթելու է թրջուած լաթի մը մէջ:

ՊԱՏՐԻՍՏՐԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ
Հետեւեալը կը քաղենք «Մարտ» թերթէն, որ ինքնին կը պարզէ Պատրիարքին հրաժարելու և շահաժարելու պարագաներուն և այդ մասին եղած յեղափոխական սպառնալիքին իրարու հետ ունեցած պայմանաւորումները:

«Օրմանեան Պատրիարքը որ սուլթանին կողմէն տրուած կարգ մը վճարական խոստումներէն յետոյ հրաժարականը ետ առած էր, հիմակ նորէն պարտաւորուել է պաշտօնը չշարունակել, վասն զի իրեն հաղորդուել է թէ տրուած խոստումները ամբողջապէս պիտի չգործադրուին:

Այս խեղդատակութեանց վրայ երկարօրէն չենք ծանրանար, Պատրիարքը արդէն ազգին իրաւունքներուն համաձայն պահանջումներ չէր ըրած. մասնակի խեղդիւններու համար դիմում ըրած էր միայն, ու անոնց իսկ գոհացում չի տրուել:
Խեղդատակութիւնը կը շարունակուի, ինչպէս չորս տարի է ի վեր: Պատրիարքը օր մը հրաժարելով, օր մը աթոռը վերադառնալով, դարձեալ հրաժարելով ու դարձեալ հրաժարականը ետ առնելով ազգը խաղցնելու գաղտնիքը սքանչելի պէս գտած է: Սուլթանը շատ գոհ է այս զաւեշտական ներկայացումներէն. թիւրք իշխանութեան պէտք եղածը այն է որ Հայոց պահանջներուն ու է գոհացում տալու հարկին մէջ չգտնուի: Թափուր կը մնան առաջնորդարանները, իր գահակալը չունի կիլիկիոյ Աթոռը, Հայ ժողովուրդը կ'իսլամանայ Հայաստան, հարքստահարութիւնները անօրինակ սաստկութեամբ կը ճնշեն Հայ ազ-

Դատաւորը ի նպատակ կնոջ վճռեց, ըսելով թէ կին մը օրինակ որ տէրնէ աշն արդիւնքին որ իւր աշխատութիւնովը կարողացաւ:

Ահա կը տեսնենք թէ մեր խաւար կոչած այն հին հին ժամանակներուն մէջ մարդիկ որքան քաղաքակրթուած էին որ կը ճանչ այն կնոջ հաւատար իրաւունքը, կնոջ ինք իւր տէրն ըլլալը, բան մը որ ներկայ 20րդ դարու սեմին վըրայ քաղաքակրթ կոչուած շատ երկիրներու ու ժողովուրդներու մէջ բոլորովին գոյութիւն չունի. կինը այր մարդուն համար ստեղծուած էր մը կը համարուի. ու այդ վայրէջքի դարերէն մեր նախնիք հնախուրդութեան միջոցաւ լեզու կելին և կնոջ իրաւունքին յարգանքը որ յանձնարարեն մեզի:

Երկու մարդիկ ընկերութեամբ ազգայնական վարձու կանան, պայմանաւ որ առաջին տարին արդիւնքին կէսը, երկրորդ տարին մէկ երրորդը տերովը վըճարեն, իսկ երրորդ տարին արդիւնքին ամբողջը իրենցը ըլլայ:

Այս գէպքին ապագայ սերունդոց հասնելու համար քրի վրայ արձանագրուելէն կը տեսնենք թէ իր ժամանակին մարդիկ բան մը յանձնարարել կուզէին զայլք հետեւոր սերունդներուն. այդ յանձնարարութեան մէջէն Մովսէսի Հանգոսեան տարիներու և Յերեմիանի անուշ հոտը կը բուրէ, մարդիկ կը ձգտէին և ընկերութիւնը կը նուիրազանցէր անհատին իւր քրտանց արդիւնքին ամբողջագէտ տիրանալու իրաւունքին սրբութիւնը:

Ահա թէ Հնախուրդութեան միջոցաւ մեր հազարաւոր տարիներ առաջ գեոգրամանի մէջ հանգեցող փառաւոր նախահարկ ինչպէս մեր առջեւ կը կանգնին և իրենց կեանքին բարձրութիւնովը, սրբութիւն վը և իմաստութիւնովը հայրական յորդորներ կը կարգան մեզի՝ զմեզ բարձրութեան, սրբութեան և իմաստութեան մէջ յառաջ մղելու:

ԳԵՂԱՄ

Ահա տարի ինչ կատարուած է Բիւլապ մէկ տարուան միջոցին:

Ա. Երկու միլիոն տօյրի ծախսուած է առողջարանական զարգացումներու համար Հովանայի մէջ միայն:

Բ. Հովանայ մեծնողներուն թիւը որ հազարին 85 էր 1898 ին, հազարին 24 ի իշած է 1900 ին:

Գ. Ինչոքն ախար գրեթէ շնջուած է:

Դ. Ճամբաներ և կամուրջներ շինուած են Հանրային բոլոր ծառայութիւններու համար:

Ե. Հանրային դատարարական գործիքները շինուած են և զըզրոցներու շինութիւնը ծրագրուած: Միայն Հովանայի գաւառական մէջ զպրոց յանախողներու թիւը կրկնապատուած է: 1500 Բիւլապի օտարները ճամբայ ելած կուգան Հարվըրտ Համալսարանին մէջ ազատ դատարարական օսանալու՝ շնորհիւ ամերիկեան ժողովուրդի առատաձեռնութեան:

Զ. Միացեալ Նահանգներէն ըստացուած ապրանք զուտարը երկու տարուան մէջ 15,500,000 յաւելում մը ունեցած է, ինչպէս նաև ներածուածքն ալ 13,500,000:

Է. Մէկ միլիոն տօյրի մօտ դրամ ծախսած է Հիւանդանոցներու շինութեան և այլ բարեսիրական ձեռնարկութեանց համար:

Ը. Հովանայի մաքսատան մէջ զեղծում և մաքսանենգութիւն գրէթէ ջրնջուած են:

Թ. Առաջակախուժները որ երկիրին ամէն կողմ տարածուած էին, բոլորովին զսպառած են:

Ճ. Տեղական ազատ ընտրութիւններու գրութիւնը ամէն ուրեք հաստատուած է:

ՃԱ. Միլիոններով ուժեղներ կը բաշխուին Սպանիոյ յուժին տակ սովամահ ըլլալու վիճակին հասած տարագրիչներուն:

ԳԲ. Փոխանակ տարեկան բացին որ միջոց տեղի կուենար Սպանիոյ վարչութեան ժամանակ, Բիւլապի մէջ ամերիկեան կառավարութեան առաջին ելմասկան տարին կը փակուի 2 միլիոն

տօյր յաւելուածով:

ՃԳ. Միակ ողբալի դէպքը դրօշմներու գողութիւնն է նամակատան բաժնին մէջ ամերիկացի պաշտօնէի մը կողմէն:

Այս զեպքումն ալ պատժուած է նոյն պաշտօնէին ձերբակալութիւնովը և զայն պաշտօնի վրայ դնողին պաշտօնանկութեամբը:

Տէր՝ կը խնդրեմ բարեհաճեցէք այս երկտողիւ վշտացեալ ձերունի մայրիկիս, այրիացեալ բեռայրիս Պ. Մարութէ և Նահիկեանի և որբացեալ զաւաճեց եւ մեր խորին շնորհակալութիւնն ու երանտազխոտութիւնն հրապարակաւ յայտնել ձեր պատանական թերթի միջոցաւ. այն բոլոր բարեկամաց, որք ամէն ջանք ըրին ու կընեն միտիւթարել մեր վշտացեալ սրտերը, իրենց հաւանութեան և կարեկցութեամբ, ոգացեալ Գրօլը Մարթայ Մ. Նահիկեանի արկածալի մահուան առթիւ:

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԿԵԱՆ, Ուտար 1900 Յուլիս 2

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Արեւելքի մէջ հետեւեալները կը կարգանք:

Ս. Պատրիարքը որ հեռագրու գաւառային առաջնորդներուն հաղորդած էր զինուորական տրոց կողմէն պատրիարքարան հաղորդուած կայսր. Իրատէին պարունակութիւնը. երէկ ալ շրջաբարկանով մը այդ մասին եղած արեւորիտութիւնները մանրամասնօրէն հաղորդած և յանձնարարած է որ առաջնորդները անդակուն կառավարութեան արձակցին (այսինքն վրայ իննան, հոգ տանին) շնորհուած տրոց տարեկան քանակութիւնը ճշդելու. և բացակայ ու նրնջեցեալները ջնջելով՝ նոր ցանկերը պատրաստելու. ըստ կայս. իրատէին:

Վանէն կը գրեն թէ ցորենի գինն հետզհետէ բարձրանալով. այժմ տեղական չափն 100 դրը. կը ծախուի: Տեղական կառավարութիւնը աղքատ ժողովուրդեան փրկելու ի նկատի առնելով՝ վերջերս ցորենի ամբարանոցները կնքեր և որոշեր է որ զանուած ցորենին կէսը շափը 60 դրը. ծախուի քաղաքային տեղիքին որպէս զի կարող ըլլայ օխան 60 փարսի Հաց կերցունել տեղացի վայելալ աղքատներուն: Մնացեալ կէսը տեղերուն պիտի յանձնուի որ իրենց ուզած գնովը ծախեն:

Արժ. Ղևոնդ Վարդապետ հետեւալը մեզ գրկած է:

Մէնթրօլայի երիտասարդներէն Պրն Գրիգոր պուճուազեանի Ընդ Օր. Եղիւար թաշտեանի պատիկ հանդիսին մէջ հինգ ազնիւ երիտասարդներ հետեւեալ նուէրներն խրկեցին Հայաստանի անօթի որբոց §5 Պ. Սարգիս Ռոտիկեան. §5 Մարտիրոս Ռուբէնեան. §4 Նշան Ասատուրեան. §3 Գարրիէլ Մ. Գարրիէլեան. §3 Պողոս Սահակեան: Կը մտիւթեմ որ որբերուն Հայրն Աստուած առատօրէն վարձատրէ այդ բարեբարներն պահելով զանոնք օտարութեան ամէն տեսակ փորձութիւններէն:

Անցեալ ուրբաթ օրուան խորհրդարանութեան համեմատ, այս օրերս Ազգ. Պատրիարքարանը 600 ոսկիի նըպաստ մը պիտի զրկէ գաւառները, այդ գումարէն 200 աղան ոսկի պիտի տրուի Բաղէշի ու Տիարպէթի. եւ 100 աղան ոսկի ալ Մշոյ եւ Շապին գարահիսարի համար:

Նպաստից յանձնաժողովը սակէ առաջ Հարիւր ոսկի գրկած էր Երեւնի: Անցեալ Չատիկ շաբաթներուն այդ գումարին բաշխումը լրացեր է: Այդ բաշխումը կատարուած է հետեւեալ կերպով:

Մաս մը զրկուած է կարօտ թեմի մնացածով 694 անձերու ցորեն բաժնուէր է. իւրաքանչիւրին տրուելով 17½ զրը արժէք ունեցող 15 օխ սերմիցու:

Վանայի մէջ կարօտութիւնները շատ աւելի մեծ են, մօտ օրերս սկսեր է նը-

պաստ բաշխուի Հայակարօտ գիւղերուն: Այդ նպաստները կը բաշխուին ամերիկացի միտիոնար Տօթթէօն Բէյնոլտի կողմէ, որ վերջերս օտար մարդասէրներու դիմում ընկելով յաջողած էր 450 ոսկի գումար մը հաւաքել:

Պարսկահայ ծանօթ վաճառական Պրն. Գրիգոր Թուճանեանց որ այս տարի Երուսաղէմ ուխտագնացութեան պահուն Պոլիս ալ հանդիպած էր, Ազգ. Հիւանդանոցին տարեկան 200 ռուբլի գումար մը յատկացուցեր է, նոյն հաստատութիւնը կատարած իր այցելութեան միջոցին:

Արաբիքի առաջնորդ Մուշեղ վարդապետ կը գրէ Պատրիարքարան թէ Ակնայ մէջ աղքատ ժողովուրդեան տուններու շինութիւնը միտիոնարներու կողմէ յանձնուած 300 ոսկիի գումարովը սկսուած է:

Երուսաղէմ Պատրիարքութեան Պոլսոյ նախորդ փոխանորդ Հանգուցեալ Սիմոն Արքեպիսկոպոս Սէֆթեան 3000 ոսկիի գումար մը թողած է նոյն Վանքին: Միաբանութիւնը անոր գերեզմանին վրայ տապանաքար մը շինել սուտէր է:

Սղերքի կարօտներուն համար 120 ոսկիի նպաստ մը յատկացուած է: 30 ոսկի ալ Բիւնկեանի կարօտ ազգայիններուն: Հայելի

Պոլսոյ նպաստից Գանձաժողովին վերջին նիստին մէջ կարգացուէր է Պ. Եղեանցի Պատրիարքին ուղղած մէկ դըրութիւնը, որով կը ծանուցանէ եղբր Մոսկուայի և Բեռլինի Եկեղեցական կառուածներու հասցիքէն 560 ոսկիի գումար մը Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ կը դրուի գաւառացի որբերու դատարարութեան համար:

Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութեան Առնեայտ Ս. Պատրիկ Կիւլպէնկեանի Սուլթանի կողմէ Ուլայի Բ. աստիճանը տրուէր է:

Վիեննայի Միտիարեան միաբանութեան մէջ եղած վէճերը քննելու համար Հոսմէն Պոլիս հասած է Բուպեան գերապայծառ և ուղղակի Բեռլայի Վիեննայի Միտիարեաններուն քով իջնալով վանականները ամբողջովին առ ժամագէտ պաշտօնէ դադարեցուցեր է մինչև ցնոր տնօրինութիւն:

Վերջին պահուն կիսացուի թէ Բուպեան Եպիսկոպոսի կատարած քննութիւնը աւելի երիտասարդ միաբաններուն նպաստաւոր եղեր է:

ՔՐՈՆԻԿ

Փեքինէն ստոյգ լուրեր չկան. ոչ մէկ կրնայ քաղաքէն դուրս ելի՝ Եւրոպացիներէն կամ ղեպաններէն լուր տանելու: Գաղաքէն հանուած լրատարներէն շատեր բռնուել, սպանուել են և զբոխին նիզակներու ծայրը անցունելով շրջաբերուած են:

Վերջին լուրերուն նայելով Փեքինի մէջ գտնուող բոլոր օտար երն սպանուած. և դեպքանասանց պահակները մորթուած են. որոց զյուսները առտներու ծայրը անցունելով պտըտցուցեր են գոչելով «Քափի հանկիւնիցի. թափի թափի»: սպաննեցէք օտարական դուները, սպաննեցէք սպաննեցէք:

Հաստատուած է հեռագրուած է Պէրլին թէ երբ Փեքինի Գերմանական դեսպանը ձի վրայ նստած արտաքին գործոց նախարարին հետ տեսնուելու կերթար նոյն իսկ զինուորները զայն ձիէն վար առեր և մորթեր են:

Ասոր վրայ կայսրը վերջին ծայր յուզուած և զայրացած է: Հրամայեր է որ վեց առաջին կարգի մարտանաւեր եւ 20,000 զօրքէ բաղկացած բանակ մը զըրկուի Չինաստան, նպասակ ունենալով սպաննուած դեսպանին վրէժը լուծել ըստ պարս ու պատճառի: Բաժնէ թէ պէտք է որ Գերմանական գործը ծածանի Փեքինի կառավարական շէնքին վրայ միւս պետութեանց դրօշներուն հետ և թէ Գերմանիոյ Չինաց պետութեան հետ ընկելը բանակցութիւնը անկէ ետքը պիտի կատարուի իր խօսքերը ուղղակի զօրքերուն ուղղելով ը-

սած է «Ահա այս դրօշալը որ հոս տարածուած է, նոր է բոլորին, ձեր առջեւ էն է որ առաջին անգամ ըլլալով պիտի մտնէ պատերազմի դաշտը. ես կըստպանմ որ զայն ետ բերէք անաղարտ եւ անբիծ. որուն վրայ փայլի Գերմանական կայսրութեան փառքը իր ամբողջ սըրբութիւնովը:

Ինչ ոչ ամերիկա և ոչ ալ միւս պետութիւնները պաշտօնապէս պատերազմ յայտարարած են Չինաստանի դէմ, Չինական պաշտօնայինը օտար պետութեանց քով դեռ կը կենան իրենց պաշտօնովը. հակառակ անոր որ կըսուի թէ Չինական կառավարութիւնը Փեքինի բոլոր օտար պաշտօնանկներուն անցադիրբը առած է որ երկրէն դուրս ելլեն, ու անոնք Գերմանական պաշտօնէին ըստանուելը տեսնելով կը վախնան պաշտպանուած տեղերնէն դուրս ելնելու:

Որքան որ այդ բոլոր ճակատամարտներու և սպաննութեանց մէջ Չինական կառավարութեան ձեռքը յայտնագէտ կը տեսնուի, կառավարութեան մէկ յայտարարութիւնը ձեռք բերուած է որով կոչ կընէ երկրին փոխարքաններուն թէ Չինաստան բոլոր Եւրոպական պետութիւններուն դէմ պատերազմ յայտարարած է, և իրենց գործողով գումարներու են, «Պօքսերները ամէն կարգի նոր զէնքերէն զատ բազմաթիւ Գրուերի թիւթանութիւնը ունին, կանոնաւոր զօրքերու հետ կը մարտնչի. այսու ամենայնիւ, դեռ ոչ Միացեալ Նահանգք ոչ ալ Եւրոպական պետութիւններ կընդունին թէ Չինաստանի հետ պատերազմ ունին:

Թէ Միացեալ Նահանգք և թէ միւս պետութիւններն ձաբոնի առաջարկն ընդունած և արտօնած են որ ուզածին չափ զօրք հանէ Չինաստանի վրայ և կանոնաւոր պատերազմ վարէ, այս անգամ թոյլ պիտի տան որ ձաբոնի զըրկու հանէ ամէն ինչ որ արգիւնցին նախկին Չինո-ձաբոնական պատերազմին տեսնել: Կերեկ թէ նոյնպէս ազատ պիտի ձգեն Ռուսիա որ ուզածին պէս վարուի:

Ճրանաւոր արտաքին գործոց նախարարն ալ յայտարարեց թէ իր մէկ պաշտօնային ու քաղաքացիներուն սպանման վրէժը պիտի լուծէ Չինաստանէն: Կըսուի թէ 4,000,000 էն աւելի «Պօքսերներ» կան, որոց երթալով կը միախանան միլիոնաւորներ Հասարակութեան մէկ կողմ:

Պօքսերու պատերազմին վրայով նորութիւն չկայ: Երբեմն փոքրիկ ընդհարումներ միայն տեղի կուենան: Քըրուկըրը զիջանելու նշան չ'ցուցներ: Լօրտ Բօպերթս վերստին լուրսեան մէջ կը գործէ ահազին անակնկալներ երեւան բերելու:

Նիւ-Եորքի մօտ Հօպքընի նաւահանգստին մէջ 5 ճամբորդի նաւեր կրակ առին անցեալ շաբաթ օրը: Մեռեալներուն թիւը 326 կը հաշուի, մնաստաններն բազմաթիւ են, կղած կորուստը 10006000 տօլարէն աւելի է:

Փրկութեան մակոյկներու պաշտօնայիններն և զործաւորներն դատի կանչուած են որոնք փոխանակ ճամբորդներուն օգնութեան հասնելու նախն մէջ կողոպուտ հաւաքելով զբաղեր են:

Յառաջիկայ կիրակի Ս. Փ. Եկեղեցւոյ ժամերգութիւնը կսկսի ժամը 9½ ին և 10½ քարոզ պիտի խօսի Տ. Ղևոնդ Վարդապետ:

Եկեղեցիէն անմիջապէս ետքը 2. Ե. Ք. Ընկերութեան կիրակնորեայ վարժարանը տեղի կուենայ ժողովարարին մէջ. ամէն հայ ազատ է գալ և օգտուել այս դասերէն:

Հոգաբարձութիւն Ս. Փ. Եկեղեցւոյ

ԿԸ ՓՆՏՈՒՄ

Մեղքոն Յովհաննէսեան Բէրշէնցի 5 տարիէ ի վեր է որ ամերիկայ կը գաւնուի, և սս վերջերս Նիւ Եորք եղած է հասցեն ով որ զիտէ թող հաճի սոսկ հետեւեալ հասցէին:

Աստուր Փ. Կարապետեան 705 Փ. Օ. Պօքս Հըրտըն Մաս.

ՎԱՐԺ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ

Սափրիչ մը կուգուի
Յարտու գործ և գոհացուցիչ վարձք
Քիչ շատ տեղական լեզուն և սովորու-

ՀԱՄԱՂՈՍՐԱՆ

Գրական և Գիտական
(Ամսաթիւն)

Իր անունին համեմատ Գրական և
Գիտական ամէն կարգի խնդրք վարձք
զեցիկ ուսումնասիրութիւններ կը պա-

Այդ պիտի հրատարակութիւններու
կարօտ են մանաւանդ այն ուսումնասիր
երիտասարդները, որոնք բարձրագոյն
դպրոց երթալու պատենութիւնէն զտրկ
են. սրտագինս կը մտլթենք որ «Համալ.

REDACTION DU HAMALSARAN,
3 Place Monge,
Paris, France.

Հ Ա Յ Ե Լ Ի

Շարաթաթերթ. Աղգային և Չաւեչ-
ասական:
Այս երգիծախառն շարաթաթերթը, իր
գնահատելի բնորոշութեանցը համար՝
մասնաւորապէս յանձնարարելի է:

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,”
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ
Տարեկան բաժնեգրին է՝ 10 Փրանք.
(2 Տօլար) Դիմել՝ հետեւեալ հասցէին:

Բ Ա Ն Ա Ս Ե Ր

Հնախօսական Պատմական
Լեզուաբանական և Բնական
Բացուած է՝ Բ ըդ. տարւոյ բաժա-
նորդագրութիւնը: Տարեկան 20 Փրանք
վեցամսիա 10 Փր. Դիմել առ Բասմաճեան

ԻՐԱՒՈՒՆԹ
Լրագիր Աղգային և Գաղաքական:
Տարեկան բաժնորդագրին է 12 Փրք.
Հասցէ.
REDACTION DE JOURNAL,
Itravouk, Varna, Bulgaria.

Վէպ Պուլկարական յեղափոխական
կեանքէն:
Գին 50 սանթիմ (10 սէնթ) գիմել
Իրաւունքի խմբագրութեան:

ԱՉԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակու-
թեան թէ՛ Պոսթօնի Թայլըր փողոցին մէջ
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պօլոս, Վենետիկի, Մ. Մամուրեանի
և Տիկին Բաֆֆիի հետ մասնաւոր կարգա-
դրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ
ալ զըրբեր բերել տալու միջոցները ձեռք
բերած ըլլալով՝ կուգամ գրատէր Հայրե-

ՍՐԵՒԵԼԵԱՆ ՕՇՍՐԱԿ
Յիշեցէք հիւրասիրութեան արեւել-
եան սովորութիւնը: Այցելուներու մա-

Յիշեցէք հիւրասիրութեան արեւել-
եան սովորութիւնը: Այցելուներու մա-
տուցանելու ամենաընտիր և զովացուցիչ
ըմպելիք է ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՇՍՐԱԿԸ. որ իր
համին, հոտին և գոյնին կողմանէ կը գե-

ԲԱՉՄԱՎԷՊ
Հանդիսարան Ամսագիր
Տարեկան բաժնորդագրին է 10 Փր:
Հասցէն է.
REDACTION DE LA REVUE,
Pazpaveb,
St. Lazar Venis, Italie.

ՀԱՒԱՔԱՆՑ

Հայ Ժողովրդական երգերի
Չափազրեալ
Պիտի բաղկանայ 6 մեծադիր տետ-
րակներէ: Առաջինը արդէն լոյս տեսած է:
Բաժնորդագրութեան պայմաննե-
րըն են:


ՇԱԻԻՂ
Հանդէս Կիսամսայ
Հասցէ.
DR. H. S. PAPAŽIAN,
Varna, Bulgaria

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ
Կ Ա Մ

Հաւաքածոյ. Աղգ. երգերու:
Մասն առաջին. գին 2 Փրք.
Հասցէ.
A. ZARPHANELIAN,
Varna, Bulgaria.

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատերգութիւն եօթը արարուած-
իրական կեանքէ առնուած և օրինակ
գործ մի է, իւր ամբողջութեամբ խիստ
հետաքրքրական ու շահեկան:
Դիմել առ
Գ. Չարֆանէլեան վերի հասցէով:



THOMAJANIAN BROTHERS,
52 Southbridge St.,
Worcester, Mass.

Ամերիկայի Հայ դպրոցականութեան կուգամք
յաջատարել, ամէն դիւրու-
թիւն կը յնայենք նաեւ որ տոմսակ տալու մասին.
դէպի թուրքիա կամ եւրոպայ.
մասնաւորապէս կը յանձնարարեմք (Յընչէ Հայն)
կոչուած գիծն որ ամենապատու-

Բ Ա Յ Ե Լ Ի

«ԴԱԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Կ. Հատոր վեր-
ջարանով և «ԿԱՅՄԵՐ» Բ. Հատոր լիա-
կատար:
Իւրաքանչիւրի բաժնորդագրին է
5 Շիլին:
Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ըն-
թացքում և անմիջապէս կուղարկուին
բաժնորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ»
եկաւ:

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն բոլոր Հայրենակիցնե-
րուս կուգամ ծանուցանել թէ՛ Օֆիսը
74 Հանովր փողոցէն փոխադրեցի 57 Հա-
նովր փողոց:
Միշտան Ուարտութեան

Ա Չ Դ

Պօղոս Տէր-Գէորգեան խորհրդի իջ
մէ գիւղէն, Ապրիլ ամսոյն մէջ Փարիզ
հիւանդանոց կը գտնուէր, իրեն կը զը-
րէինք Բեռլինի հասցէով. հիմա
ուր ըլլալը շնք գիտեր. տեղեկութիւն
ուենցողէն կը խնդրենք որ իմացունել
հաճի Ձայն Հայրենեացի միջոցաւ և շը-
նորհակաւ կըլլանք:
Գրիգոր Պօյաճեան
Փրովիտենս (Ամերիկա)

ԸՆԿԵՐ ԿՈՒՉԵՄ

Չլիի ամենաբազմաթ տեղին մօտ
3 տարիէ ի վեր Սափրիչի խանութ մը
ուենիմ. որ միշտ շատ շահաւոր եղած է
և աւելի լաւ ապագայ ունի. մազ կա-
րելու 15 իսկ սափրելու 10 սէնթ կառ-
նենք. գործի շատութեան համար գոր-
ծաւոր կը պահեմ. սակայն կը նախընտ-
րեմ Հայ ընկեր մը ունենալ, խանու-
թիւն մէջ ունիմ 3 Բօլոյսիան անալիս
կարգի աթոռ և ուրիշ տեսակ աթոռ մը
և ամէն Հարկաւոր գործիքներ ունիմ:
Ընկերս գործէն հասկնալու է:
36 Washington Avenue,
Chelsea, Mass.

ԱՆԱՀԻՏ

Հանդէս Աղգային, Գրական և Գե-
ղարուեստական. բացուած է Բ ըդ. տար-
ուայ Բաժնորդագրութիւնը:
Հասցէ
ՍՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ
6 Place de L'odeon Paris



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
ՄԵՍԻՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՔԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ
Նիւ-Եորք 509 2 ըդ. Ավինո
Տեղական և Արեւելեան բազմատե-
սակ նպարեղներ, լաւագոյն տեսակ
ընդեղներ, եղանակին համեմատ բան-
ջարեղներ և առօրեայ թարմ միս: Հայ՝
կական պանիր փառուտը 12 սէնթ, մեծա
քանակ գնողաց 10 սէնթ. Ուստի պա՛-
տուական Պղլուր և Մեծած փառուտը 4
սէնթի մեծաքանակ գնողաց 3 ք:

Ձիթապտուղ (գէյթուն) փառուտը 10 ս.
մեծաքանակ գնողաց մասնաւոր գեղը
կընեմ, 5 փառուտի քէն սալապ Հատը 25
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ Հա՛-
տը: Մեր քով միշտ պատրաստ կայ
Հայկական ամեն տեսակ պարանքներ, ա՛-
ղը գորուած եսփրաղ, ընտիր կորկոտ,
անթապ Հալլասի, կանտեղ գէյթուն.
Ձէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա՛-
քառնի լօքում տեսակներովը, ոսպ աղ-
ցուած կամ շաղցուած, սուսախ, սիսեռ
Պօլոս իսաչար պանիր, լէպլէպի շաքա՛-
րի տեսակներով, քիմիօն, անասն, պատ՛
տուական խունկ. աղւոր ալիւրէ Հայ
2 Հատը 5 սէնթ, և այլն... Կամակով ե՛-
ղած յանձնարարութիւնք փութով և քիչ
վարձքով կը կատարենք մեր յնտուկ
կառքով: վճարու մեքը կանխիկ են և ոչ
ապառնիկ:
Նաև կը ծախեմ Պամիեա, Պայսերի
Պատրմա և Սուճուղ:

ԿԱՐԻՈՐ ԱՉԴ

Ճաշակի յարմար պատուական ապուրտ
(Պայսերի Պատրմայ) կը պատրաս
տեմ. գինն է՝ փառուտը 35 սէնթ. վա
ճառման կեդրոնատեղին՝
Տ. ՍԷՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS